ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ
ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ
ԱՋԱՓՆՅԱԿ-2 ՆՍՏԱՎԱՅՐ
(ՀՀ, համայնք ԵՐԵՎԱՆ, ԱՋԱՓՆՅԱԿ, ՀԱԼԱԲՅԱՆ Փ., շենք 41Ա, 10-ՐԴ ՀԱՐԿ)

Քաղաքացիական գործ թիվ ԵԴ2/3467/02/24

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄԸ
ՀԱՅՑԱԴԻՄՈՒՄԸ ՎԱՐՈՒՅԹ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

16 մայիսի 2024 թվական քաղաք Երևան

Հայաստանի Հանրապետության Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանը՝ նախագահությամբ դատավոր Հ. Ջալալյանի (այսուհետ նաև՝ Դատարան), ուսումնասիրելով «Մ. Բուատ» ՍՊ ընկերության հայցադիմումն ընդդեմ ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության՝ ՏԿԵՆ-ԲՄԱՇՁԲ-2024/7Ս ծածկագրով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովի 23.04.2024 թվականի թիվ 2 արձանագրության 3.1 կետը՝ «Փայլք» ՍՊ ընկերության հայտը բավարար գնահատելու մասով անվավեր ճանաչելու, որպես հետևանք «Փայլք» ՍՊ ընկերությանը հաղթող մասնակից ճանաչելու որոշումն անվավեր ճանաչելու, «Փայլք» ՍՊ ընկերության հայտը մերժելու և «Մ. Բուատ» ՍՊ ընկերությանն ընթացակարգի հաղթող ճանաչելու պահանջների մասին, և քննարկելով այն վարույթ ընդունելու հարցը,

ՊԱՐԶԵՑ

«Մ. Բուատ» ՍՊ ընկերության ներկայացուցիչ Վ. Հայրապետյանի կողմից 04.05.2024 թվականին էլեկտրոնային եղանակով հայցադիմում է ներկայացվել Դատարան ընդդեմ ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության՝ խնդրելով անվավեր ճանաչել ՏԿԵՆ-ԲՄԱՇՁԲ-2024/7Ս ծածկագրով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովի 23.04.2024 թվականի թիվ 2 արձանագրության 3.1 կետը՝ «Փայլք» ՍՊ ընկերության հայտը բավարար գնահատելու մասով, որպես հետևանք անվավեր ճանաչել «Փայլք» ՍՊ ընկերությանը հաղթող մասնակից ճանաչելու որոշումը, «Փայլք» ՍՊ ընկերության հայտը մերժել և «Մ. Բուատ» ՍՊ ընկերությանը ճանաչել ընթացակարգի հաղթող:

Դատարանի 10.05.2024 թվականի որոշմամբ հայցադիմումը վերադարձվել է:

«Մ. Բուատ» ՍՊ ընկերության ներկայացուցիչ Վ. Հայրապետյանը 13.05.2024 թվականին էլեկտրոնային եղանակով հայցադիմումը կրկին ներկայացրել է Դատարան, որը նույն օրը մակագրվել է ՀՀ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի դատավոր Հ. Ջալալյանին:

Դատարանն, ուսումնասիրելով էլեկտրոնային եղանակով կրկին ներկայացված հայցադիմումը, արձանագրում է, որ այն ներկայացվել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 120-122-րդ հոդվածներով սահմանված պահանջներին համապատասխան:

Հայցադիմումի ընդունումը մերժելու կամ այն վերադարձնելու հիմքեր չկան, հետևաբար, Դատարանը գտնում է, որ հայցադիմումը պետք է ընդունել վարույթ:

Ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 124-125-րդ, 199-200-րդ, 234.6-րդ հոդվածներով՝ Դատարանը

ՈՐՈՇԵՑ

«Մ. Բուատ» ՍՊ ընկերության հայցադիմումն ընդդեմ ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության՝ ՏԿԵՆ-ԲՄԱՇՁԲ-2024/7Ս ծածկագրով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովի 23.04.2024 թվականի թիվ 2 արձանագրության 3.1 կետը՝ «Փայլք» ՍՊ ընկերության հայտը բավարար գնահատելու մասով անվավեր ճանաչելու, որպես հետևանք «Փայլք» ՍՊ ընկերությանը հաղթող մասնակից ճանաչելու որոշումն անվավեր ճանաչելու, «Փայլք» ՍՊ ընկերության հայտը մերժելու և «Մ. Բուատ» ՍՊ ընկերությանն ընթացակարգի հաղթող ճանաչելու պահանջների մասին, ընդունել վարույթ:

Հայցադիմումը Դատարանում ներկայացված համարել այն սկզբնապես ներկայացնելու օրը՝ 04.05.2024 թվականը:

Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից և ենթակա չէ բողոքարկման:

ԴԱՏԱՎՈՐ՝ Հ.ՋԱԼԱԼՅԱՆ

Digitally signed by JALALYAN HASMIK 6014860665
Date: 2024.05.16 19:22:24 AMT

Տվյալ ֆայլերին կարող եք ծանոթանալ նաև մուտք գործելով "Էլեկտրոնային դատավարություն" համակարգ՝ cabinet.armlex.am